ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «Գավառի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ մանկավարժական աշխատողի հետևյալ թափուր տեղի համար՝

1. Ֆիզկուլտուրա – 680 ժամ

Մրցույթն անցկացվելու է բանավոր՝ հարցազրույցի միջոցով, յուրաքանչյուր մասնակցի հետ առանձին, քոլեջի կողմից նախապես կազմած բանավոր առաջադրանքներից, որոնք առնչվում են դասավանդվելիք առարկային / մոդուլին/ և մանկավարժական գործունեությանը:

Մրցույթին կարող են մասնակցել՝

1/ Հանրակրթության առարկաների դասավանդման դեպքում այն անձը, որը ստացել է մանկավարժական համապատասխան որակավորում (բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանով) կամ ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ:

2/ Մասնագիտական առարկաների դասավանդման դեպքում այն անձը, ով ունի տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշիչներով սահմանված պահանջներին համապատասխան մասնագիտություն՝ մասնավորապես դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1/ Դիմում /Ձև1/

2/ կրթության մասին հավաստող փաստաթղթեր/ դիպլոմ՝ բնօրինակը և պատճենը/

3/ անձնագիր/բնօրինակը և պատճենը

4/աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք / առկայության դեպքում/

5/ ինքնակենսագրություն /Ձև 4 /

6/ մեկ լուսանկար՝3x4 չափի.

7/այլ պետության քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

8/ Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկը /բնօրինակը և պատճենը/,

9/հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր /դրանց առկայության դեպքում/

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հոկտեմբերի 27-ը ներառյալ՝ 16:00-ն:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 30-ին, ժամը՝ 12:00 «Գավառի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ում:

Հաց. Գավառ, Նալբանդյան 91/1, բջջ. +374 33 02-62-30